

Յուլիս, 1978

Սիրելի Անդամ,

Անցեալին, միութենական կեանքի մեր մեծագոյն դժուարութիւնը եղած է կարենալ հաղորդակցական կապ մը հաստատել մէկ կողմէ անդամներուն՝ եւ միւս կողմէ վարչութեան միջեւ: Կը յուսանք, որ այդ դժուարութիւնը փարատելու մեր այս առաջին փորձը արդիւնաւէտ կըլլայ եւ ձեր գործակցութիւնն ու փոխադարձ հաղորդակցութիւնը չէք զլանար մեզի:

Ինչպէս գիտէք, միութեանս տարեկան անդամական ընդհանուր ժողովը տեղի ունեցաւ Յունիս 8-ին: Մեր փորձառութեան մէջ, անցեալ տարիներու հետ բաղդատած, ժողովին մասնակցողներուն թիւը եւ մանաւանդ այդ թիւին այդպիսի յաւելումը քաջալերական էր՝ թէկուզ ոչ այն ինչ որ կրնար ըլլալ: Կը յուսանք, որ յառաջիկային առաւել բազմամարդ կըլլան մեր այս--եւ այլ--ժողովները եւ դուք ալ, եթէ մանաւանդ բացականքէն էիք, նկատի կ'ունենաք այս պարագան:

Ինչպէս բոլոր կազմակերպութիւններուն, բայց մանաւանդ ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ նման կազմակերպութեան մը պարագային որուն անդամները տարին հազիւ մէկ կամ երկու անգամ իրար հանդիպելու առիթն ունեցած են ցարդ, առաւելագոյն թուով անդամներու մասնակցութիւնը ըստեղծուած բոլոր առիթներով անհերքելիօրէն պայմանական է միութեան գործերուն յաջողութեան համար:

Վերադառնալով ժողովին, առ ի տեղեկութիւն կը յայտնենք թէ հերթով դադարող հինգ վարչականներուն փոխարինողներ ընտրուեցան, որոնցմէ երեքը նորերիսկ երկուքը վերընտրեալներ են: Նորակազմ վարչութեանս անուանացանկը, համապատասխան պաշտօններով եւ իրենց հեռաձայնի թիւերով պիտի գտնէք առանձինն ներփակուած:


Ժողովը քննարկեց շրջանաւարտ վարչութեան նիւթական եւ քարոյական միամեայ գործունէութիւնները եւ, զանոնք քաւարար գտնելէ ետք, անցաւ առաջարկներու եւ թելադրութիւններու՝ միութեանս ապագայ գործունէութեան կապակցութեամբ: Նոր վարչութիւնը իր կարելին պիտի ընէ այդ թելադրութիւններէն առաւելագոյն մասը իրագործելու համար:

- Մինչ այդ, մօտագայ գործունէութիւններու կարգին կան հետեւեալներ.
- 1.- Ալիսիայ Կիրակոսեան-Գասպարեանի մեր հրատարակած ԱՐՄԱՏ ԵՒ ԷՈՒԹԻՒՆ հատորի հրատարակում
  - 2.- Թատերական առնուագն մէկ, թերեւս երկու, ելոյթներու իրագործում
  - 3.- Մեր տրամադրութեան տակ ունեցած հրատարակութիւններու--վերի թիւ 1-էն գտո--սպառում:

Այս վերջին կէտի առնչութեամբ եւ թէեւ մենք ցանկը արդէն ԱՄՊԱՐԷՋԻ մէջ հրատարակած ենք, կը հաւատանք որ խորապէս փափաքելի է, որ, առաջին հերթին, մեր անդամները իրենք ապահովեն այդ ցանկէն իրենց շունեցածները եւ, մանաւանդ, քաջալերեն իրենց ոչ-անդամ բարեկամներն ու ազգականները եւս՝ տիրանալու իրենց փափաքածին: Ուստի, այդ ցանկը նոյնութեամբ, ինչպէս նաեւ անոր պարունակութեան մասին համառօտակի տեղեկութիւնները, կը հրատարակենք ձեր գործածութեան համար՝ յուսալով որ դուք եւս պիտի օգտուիք անկէ:

Միութեանս անդամներուն ընկերակցական կապը առաւելագոյն չափով սերտացնելու նպատակով, վարչութիւնս որոշեց դաշտագնացութիւն մը կազմակերպել, խմբական երթուղարձով, դէպի Քէմփ Քեսապ եւ Օմբուն ալ Գալիֆորնիոյ Լատինական հին վանքերէն մին կամ երկուքը այցելել որպէս, թէ-





# ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԻՒՆ

ARMENIAN CULTURAL ASSOCIATION HAMAZKAYIN, Los Angeles

Էջ 2

Յուլիս, 1978

կուզ ոչ հայկական, յամենայն դէպս մշակութային ելոյթ: Հարկ եղած հետապնդումները ընելէ ետք, հետեւեալ պարագաները մշտուած են այս պտոյտի առընչութեամբ.-


- 1.- Թուական՝ Կիրակի, Օգոստոս 19
- 2.- Մեկնումի վայր եւ ժամ՝ Սբց. նահատակաց Եկեղեցիին բակը, առաւօտեան ժամը 8:30-ին
- 3.- Երթեւեկի եւ ծաշի գին՝ անձ-գլուխ 8.00 տոլար, իսկ զոյգը՝ 15.00 տոլար. ծաշը պիտի սպասարկուի Քէմփի խնամակալութեան կողմէ:
- 4.- 12 տարեկանէն փոքր երեխաներու համար՝ կէս գին:

Վարչութիւնս խորապէս կը փափաքի, որ մասնակցողներս միասին երթանք ու միասին վերադառնանք եւ, որպէս զի վերջնական կարգադրութիւնները ընել կարենանք, ստիպուած է պահանջել, որ մասնակցիլ ուզողները, ամենաուշը մինչեւ Օգոստոս 6-ը, վարչականներէս ոեւէ մէկուն իմաց տան՝ որեւէ միջոցով:

Կը յուսանք, որ մեր այս առաջին փորձը լաւագոյնս կը քաջալերէք:

Վարչութիւնս, ուրեմն, անդամներուն ու իր միջեւ հաղորդակցութիւն մը հաստատելու փորձը այսու ըրած է. ապագային անոր յաջողութիւնն ու ընդլայնումը մեծապէս անդամներուն--ձեր--քաջալերանքէն եւ մասնակցութենէն կախում ունի...

## ՀԱՄԱԶԳԱՅԻՆ ՀԱՅ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԸՆԿԵՐԱԿՑՈՒԹԵԱՆ ՄՕՏ



### Վ Ա Ճ Ա Ռ Ե Լ Ի Հ Ր Ա Տ Ա Ր Ա Կ Ո Ւ Թ Ի Ի Ն Ն Ե Ր

Ձեր նախընտրածները ապահովելու համար դիմեցէ՛ք Վարչութեան անդամներուն, ի մասնաւորի հեռաձայնով՝ 341-6175, 465-6641, 321-2782:

Կամ գործածեցէ՛ք այս կտրուը ու ներփակեցէ՛ք փոխարժէքը:

- 1.— Միլանոյի համալսարանի նարտարապետական ամպիոնի հրատարակած՝ Հայ Ճարտարապետական Յուշարձաններու Ալպոմ.
 

<input type="checkbox"/> Թիւ 1 Հաղբատ \$4.00	<input type="checkbox"/> Թիւ 3 Սանահին \$4.00
<input type="checkbox"/> Թիւ 2 Խաչքար \$5.00	<input type="checkbox"/> Թիւ 4 Ս. Թադէ \$5.00
- 2.—  Աղթամար գումաւոր պատկեր \$1.50
- 3.—  Հրաշալուր Պատմութիւն Հայոց \$3.00  
(Նշան Պէշիկթաշիեանի)
- 4.—  Արմատ եւ Էութիւն \$2.00  
(Ալիսիա Կիրակոսեան-Փասպարեանի)

Անուն . . . . .

Հասցէ (Փողոց) . . . . .

(Քաղաք) . . . . . (գիփ քօտ) . . . . .

Կը ներփակեմ . . . . . տոլարնոց վնարագիր:

Կ' ՈՒՋՈՒԻՆ...  
ԱՆՄԻՋԱՊԷՍ...  
ԱՌԱՆՑ ՅԱՊԱՂՈՒՄԻ...

Անդամներ... առանց սեռի թէ տարիքի խտրութեան... որոնք, դիտողի դիրքերէն իջած, տրամադիր ըլլան անմիջական աշխատանքի՝ միութեանս ընդգրկած մարզերէն որեւէ մէկուն մէջ...

Մասնաւորապէս կարիքն ունինք մեր բեմական աշխատանքներով հետաքրքրուողներու եւ դերասանական բաժին վերցնել ուզողներու... 2' ըլլայ որ բոլորդ ալ միասին դիմէք... , բայց ուզողները թող հեռաձայնն ոեւէ վարչականի

.....

Մօտ օրերէն վարչութիւնս հաւանաբար դիմէ ձեզմէ ոմանց՝ այս կամ այն յանձնախումբին մաս կազմելու խնդրանքով. նման բարեղէպ պարագայի մը կը խնդրենք որ տեղերնիդ ծանր... չնստիք:

.....

Անուն մը մեր այս... թերթիկին համար:

Հ Ա Մ Ա Զ Գ Ա Յ Ի Ն





Բանաստեղծուհի Ալիսիա Կիրակոսեան-Գասպարեանի Արմատ եւ Էուրփիւն Հատորը, դասական ուղղագրութեամբ:

Բանաստեղծութիւնները, որոնց բնագիրը սպաներէն է, հայացուցած է հայրենի մեծանուն բանաստեղծ Վահագն Դաւթեանը, եւ քանի որ Հայաստանի մէջ նոյնանուն հատոր մը լոյս տեսած էր արդէն, կ'ուզեմ շեշտել որ այս հատորը առաջինի պարզ վերահրատարակութիւնը չէ:

Մինչդեռ առաջինը միայն երկու բաժիններ ունէր (Արմատ եւ Էուրփիւն), ներկայ հրատարակութիւնը կը պարունակէ երրորդ բաժին մը՝ Խորհուրդ եւ, մանաւանդ, բանաստեղծուհիին Հայաստան այցելութենէն յետոյ գրուած «Նամակ առ Հայաստան» խորագրուած քերթուածը՝ ձօնուած Վահագն Դաւթեանի, որ սիրեղեղ արտայայտութիւնն է զգացումներու այն ժայթքումին զոր մարդ կ'ընկալէ՝ երբ մինչ այդ առանց տեսնելու իր սիրածին, տենջացածին հետ կը գիրկընդխառնուի, կը նոյնանայ... Իսկ եւ իսկ սփիւռքի մէջ իրապէս հայօրէն ապրող մարդուն զէպի իր հայրենիքը սնուցած զգացումին և կարօտին արտայայտութիւնը: Զգացում՝ որ լիովին վերացական է, բայց եւ այնպէս իսկական եւ յուերթական: Այս վերացականութիւնն ալ արդէն Ալիսիայի բանաստեղծութիւններուն կարեւոր յատկանիւններէն մին է:

Քանի մը խօսք ալ յայտարարուած միւս հրատարակութիւններուն առնչութեամբ.—

Ա.— Հայ ճարտարապետութեան ալպոմները.— Գեղատիպ, հոյակապ նկարներ՝ գունաւոր եւ սեւ-եւ-ճերմակ, ընդարձակ բացատրութիւն՝ իտալերէնով եւ անգլերէնով եւ ճարտարապետական չափական դժադրութիւններով: Առանց այլեւայլի հպարտաօրիթ հրատարակութեան շարք մը: Ափսոս, որ թիւ 5-ը, Ամբերդ, որ բացատրութիւններու հայերէն բաժին մ'ալ ունի, ըստպատճառ է...

Բ.— Աղքատար, պարզ... եւ կտրուկ: Բացառապէս գեղեցիկ գունաւոր նկար (փօսթըր) մը՝ 22 մասնաչափ լայն եւ 34½ մասնաչափ բարձր, որուն մէջ վանքի աւերակները իրենց պարզութեամբ կ'իջխեն, կը գերեն դիտողը...

Գ.— Ողբացեալ գրագէտը, Նշան Պէշիկթաշլեան, իր անհատական անհուն տառապանքին ու տանջանքին հակառակ — բայց, հաւանաբար, այդ իսկ պատճառաւ — մշակած էր գրական լեզու մը որ իր կծուութեամբն իսկ անուշ է, խայթիչ ըլլալով հանդերձ սիրելի է բայց, մանաւանդ, յատուկ սրամտութիւններով լեզուն է:

Պատմագէտներու եւ պատմաբաններու համար, գրաւոր պատմութիւնը, անկախ անոր ներկայացուած ձեւէն, հետաքրքրական է եւ ուսանելի. հանրութեան համար ան, առ-

հասարակ, տաղտկալի է, որովհետեւ դէ՛թ գեղարուեստ չէ: Նոյն այդ պատմութիւնը փոքրիկներուն հասկնալի դարձնելու համար յաճախ հեքեաթ է: Իսկ Պէշիկթաշլեանի զրչին տակ տաղտուկը վերացած ու հեքեաթը չքացած է, եւ հայոց պատմութիւնը դարձած է պատմութիւն, Հրաշալուր Պատմութիւն Հայոց, զոր կարելի է մէկ շունչով կարդալ եւ կարդալէ յետոյ կարելի չէ, սակայն, չափնընդիլ թէ՛ լեզուէն եւ թէ՛ մեր փառաւոր անցեալէն քանի որ երկուքն ալ կը խայտան, կը պարեն կարգացողին աչքերուն առջեւ:

Դ.— Ամերիկահայութեան ճանչցած հայկական «պարեղանակ»ները տաւուլ-գուրմայի խժալուրութեամբ յայտնի են (չատ բան կայ ըսելիք այս մասին...) մասնաւորապէս, կը կարծեմ, որովհետեւ մեր ժողովուրդի իսկական եւ, օրինակ, Թումանեանի ակնարկած «դճոլ»ն ու «զուրնի»ն չեն... Ինչ խօսք որ Գաւառական Պարեք (պէտք էր ըլլար՝ Պարեքամակներ, բայց...) անւանուած երգապանակի պարունակած եղանակներն ալ ունին թմրուկ եւ եղեգասրինդ, բայց ասոնք աւելի դժուր ու գուրմի են եւ, ատոր համար ալ՝ հեշտալուր եւ գրաւիչ: